Բնակչության սոցիալական խորը շերտավորման և տնտեսական անհավասարության մասին է վկայում այն փաստը, որ մեծածախք կառուցումներով և թանկարժեք նվերներով հանդես եկող խոջաներից և ունևոր գյուղացիներից, ինչպես նաև ավելի համեստ նվիրատվություններով հիշվող արհեստավորներից ու միջակ գյուղացիներից զատ, գյուղավանում զգալի թիվ են կազմել նյութական սուղ պայմաններում գտնվող ընտանիքները, որոնց հատկացված «Քյոթուկի» էջերում, տասնամյակների ընթացքում նրանց կողմից կատարված որևէ նվիրատվության մասին գրառումներ չկան։ Այդպիսի տընտեսությունների թիվը 70-ի է հասնում, որը կազմում է գյուղի բնակչության մոտ 30%-ը։

Մեծահարուստ խոջաների առկայությունը ավանում, ինչպես նաև նվիրվող իրերի ու առարկաների տեսականին, թույլ են տալիս ասելու, որ թեև Ակոռին անմիջապես առևտրական մայրուղու վրա չէր գտնվում, սակայն ապրանքաշրջանառության ոլորտից դուրս չէր մնացել։ Հիշատակված են ամենատարբեր վայրերից բերված ապրանքներ. «Բուրսու բան կարպետ», «Բուրսոյ բարձ ծածկոց», «Դիզաղայ կարպետ», «Թարիզայ բան եաղլուխ», «Հնդրստանու բան դալամքար վարաքուր», «Ֆռանգի քիմխայ», «Ֆռանկի պասմայ բեմի ծածկոց» և այլն։ Կարավանատան կառուցման անհրաժեշտության փաստն ինքնին խոսում է առևտրականների հաճախակի երթևեկության մասին։ Առևտրականներ, որոնք հիշված են նաև նվիրատվական արձանագրություններում. «Աստուած ազատնէ բազըրականներն, Ա (1) Սարգիս գիրք բերին Ս. Յակոբին»։

Ակոռու բնակիչները, նույնպես, եկեղեցական սպասքից և հանդերձանքից զատ, մեծ թվով ձեռագիր Ավետարաններ և ծիսական բնույթի այլ գրչագրեր են նվիրել Ս. Հակոբա վանքին, որոնց թիվը հասնում է 50-ի։ Այդ թվում 1 Աստվածաշունչ, 13 Ավետարան, 4-ական Հայսմավուրք և Մաշտոց, 3-ական Սաղմոսարան և Քարոզգիրք, 2-ական Շարակնոց, Հիսուս Որդի, Ճաշու գիրք (Ճաշոց), Խորհրդատետր, Գանձարան և Տոնացույց և մեկական Ճառընտիր, Հարանց վարք, Աղոթամատույց, Ավետարանի մեկնիչ, Ժամի մեկնիչ, Հարցմունք (Գր. Տաթևացու «Հարցմանց գիրք»-ը), Սարգիս գիրք (Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեայց»-ը), Զայնավոր գիրք (Մանրուսմունք), Զայնաքաղ (Շարակնոց) և Ֆռանկի գիրք (Ունիթոռական գրակ.)։ Նվիրված է նաև մեկական տպագիր (պասմայ) Աստվածաշունչ, Սաղմոս և Քաղուածո շարական։

Սրանք Քյոթուկի գրչության ժամանակին հաջորդող տասնամյակների ընթացքում կատարված նվիրատվություններն են։ Անշուշտ դրանից առաջ ևս վանքում եղել են ձեռագիր մատյաններ, և մինչև վանքի ավերումը այլ գրքեր էլ են մուտք գործել վանքի մատենադարանը։ Ուստի անհավանական չէ, որ կործանման ժամանակ վանքում մեծ թվով գրչագրեր են եղել և թերևս մնացել են փլվածքի տակ։ Հայտնի չէ, հետագայում ձեռագրեր գտնելու նպատակով որոնումներ կատարվել են այնտեղ, թե ոչ։ Քյոթուկի առկայությունը, սակայն, թույլ է տալիս մտածելու նաև, որ որոշ ձեռագրեր զանազան առիթներով դուրս են բերվել վանքից, նախքան վանքի կործանումը, կամ էլ հետո պեղվել և հանվել են հողի տակից։ Պետք է հուսալ, որ մեր ձեռագրական ֆոնդերի պատմությունը ուսումնասիրող մասնագետներին երբևէ կհաջողվի պարզել իրողությունը։

Նվիրված են նաև տարբեր չափսի ու որակի սրբապատկերներ. «մէկ Աս-